community

The New Apostolic Church around the world

01/2024/AM

2024-ի նշանաբանը՝
Աղոթելը գործում է

Խմբագրական
Աղոթելը գործում է

Ժամերգություն
Հայրը, զավակները և ամբողջ ընտանիքը

Վարդապետական ուսմունք
Պաշտոնի համար ընտրություն և կանչ

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Աղոթելը գործում է

Ժամերգություն

4 Հայրը, զավակները և ամբողջ ընտանիքը

Մանկական անկյուն

10 Եղիսեն բուժում է բորոտ Նեեմանին

12 Այցելություն Քիմբերլեյին՝ Պարամարիբոյում / / Սուրինամ/

Տեսություն

14 Պաշտոնի համար ընտրություն և կանչ

Ընդհանուր լուրեր

18 Ոչ մի ճանապարհը լայն չէ

Շապիկի առջևի նկարը՝ Ֆրանկ Շուլդթի
Շապիկի հետևի նկարը՝ ԴՀ Կոնգո ՆԱԵ

Աղոթելը գործում է:

Լուսանկարը՝ Միջազգային Նորաստեղծական ենթակառուցվածքների ընկերության

Սիրելի քույր-եղբայրներ,

անկախ այն ամենից, ինչ մենք ապրում ենք, կա մեկ - հաճախ թերագնահատվող- ուժի աղբյուր՝ մեր անձնական աղոթքը: Մենք պետք է համոզված լինենք, որ մեր աղոթքը լսվում է և ինչ-որ չափով գործում:

Դա նաև 2024 թվականի մեր նշանաբանն է՝ Աղոթելը գործում է:

Ինչպես միշտ, մեզ համար օրինակ է Հիսուս Քրիստոսը: Նա մտերմիկ երկխոսություն է ունեցել Հոր հետ: Նա աղոթել է իր յուրայինների համար և այսօր էլ նա մեր բարեխոսն է: Նրա աղոթելը գործում է նաև այսօր: Դա մեզ կարող է մխիթարություն և վստահություն տալ նաև նոր տարում:

Ինչպե՞ս է գործում աղոթելը՝

- Աղոթելը շնորհակալ է դարձնում:
- Աղոթելը գթասիրտ է դարձնում:
- Աղոթելն ուժեղացնում է:
- Աղոթելը սրբացնում է: Աղոթելը միավորում է:

Որպեսզի մեր աղոթքը գործի, մենք պետք է աղոթենք այնպես, ինչպես Հիսուսն է սովորեցրել:

Մի կողմից պետք է մեր աղոթքը մշտական լինի ու նաև՝ լուրջ, մյուս կողմից՝ մենք պետք է խնդրենք Հիսուսի անունով, կենտրոնում պետք է լինի հավիտենական փրկությունը:

Մենք պետք է նաև միասնական աղոթքի ձգտենք համայնքում, ընտանիքում և գործընկերության մեջ:

Բոլորին ցանկանում եմ օրհնված 2024 թվական և զորացնող աղոթքներով լի կյանք:

Սրտանց ողջույններ

Ժան-Լյուք Շնայդեր

Հայրը, զավակները և ամբողջ ընտանիքը

Լուսանկարները՝ ՆԱԵ Կանադա

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հունիսի 18-ին այցելել է Հալիֆաքսի համայնք / Կանադա/

Հովհաննես Ա 3, 1

Տեսեք ինչպիսի սեր շնորհեց մեզ Հայրը, որպեսզի մենք կոչվենք Աստծո որդիներ, աշխարհը մեզ չի ճանաչում նրա համար, որ նրան էլ չճանաչեց:.

Սիրելի եղբայրներ և քույրեր, իսկապես մեծ ուրախություն է այս ժամերգությունն այսօր ձեզ հետ միասին ապրելը: Ես ուրախ եմ այս համայնքի համար, որ մենք այստեղ՝ ձեր եկեղեցում, կարողացանք միասին լինել: Նաև այսօր մենք վստահաբար ապրեցինք Սուրբ Հոգու զորությունը: Ինչն ինձ համար նկատելի է, դա այն է, որ ներկա համայնքը ավելի փոքր է, քան անցած կիրակի էր: Մենք մի քանի հազար մարդով ավելի քիչ ենք, քան Զամբիայում: Բայց մի մտահոգվեք՝ Սուրբ Հոգու զորությունը կախված չէ ունկնդիրների թվից և բարձրախոսների քանակից: Սուրբ Հոգու զորությունը կայանում է Աստծո զորության մեջ՝ յուրաքանչյուրին դիմելու և անձնական ավետիսը փոխանցելու: Ներկա է երկու կամ քսան հազար մարդ՝ Սուրբ Հոգու զորությունը նույնն է: Նա յուրաքանչյուրին անհատապես է դիմում կյանքի իր այսօրվա իրավիճակում, նրան ասում, թե Աստված ինչ է սպասում իրենից ու դրա համար նրան զորություն է տալիս: Սա է Սուրբ Հոգու զորությունը:

Ես ամբողջովին վստահ եմ, որ մենք այսօր այդ զորությունն ապրելու ենք:

Այսօրվա աստվածաշնչյան խոսքը մենք վերցրել ենք Հովհաննեսի առաջին թղթից ՝ ընդհանուր առմամբ այն հավատացյալների համար զգուշացում է այն ժամանակվա կեղծ ուսուցանողներից: Աստվածաշունչը պարզ չի բացատրում, թե ինչի մասին է խոսքը: Թվում է, թե կային մի քանի կեղծ ուսուցանողներ, ովքեր չէին հավատում Հիսուս Քրիստոսի աստվածային բնությանը: Առաքյալներն ու նրանց հետ համագործակցողները պետք է պայքարեին այդ կեղծ ուսուցանողների դեմ: Մենք հաստատ չգիտենք, թե ինչի մասին է խոսքը, քանի որ այդ մարդիկ որոշ ժամանակ հետո պարզապես անհետանում էին, և մենք այսօր հաստատ չգիտենք, թե ինչ էր նրանց ուսմունքը: Սա պարզապես նաև լավ դասախոսություն է: Ոչ ոք չգիտի, թե իրականում ինչի մասին է խոսքը, բայց ճշմարիտ Ավետարանն իր տեղն ուներ:

Թե դա այսօր մեզ համար ինչ նշանակություն ունի, պարզ բացատրված է՝ նաև այսօր կան շատ մարդիկ, ովքեր ցանկանում են մեզ բացատրել, թե ինչ է ասում Ավետարանը, և թե ինչպես մենք պետք է այն հասկանանք: Սակայն, մենք նորառաքելական քրիստոնյաներ ենք և հավատում ենք, որ Աստված ուղարկել է իր առաքյալներին, որպեսզի Ավետարանը ճիշտ ձևով տեղեկացնեն: Սա է մեր հավատը: Դրա համար էլ մենք հետևում ենք առաքյալների տեղեկություններին, որպեսզի նախապատրաստված լինենք Քրիստոսի գալստյանը: Դրա շուրջ մենք չպետք է բանավիճենք: Դա պարզապես այդպես է:

Այն ժամանակ խոսքը գնում էր Հիսուս Քրիստոսի էության մասին: Այդ մարդիկ Հիսուս Քրիստոսի ոչ բոլոր ավետիսներ էին ըմբռնում, իսկ Հիսուս Քրիստոսի ամենակարևոր ավետիսներից մեկն էլ այն էր, որ նա Աստծուն որպես Հայր է բացահայտում: Մենք կարող ենք այլ կերպ այսպես ասել՝ Աստված Հիսուս Քրիստոսով որպես Հայր հայտնվեց: Հրեա ժողովուրդն այլ ըմբռնում ուներ Աստծո մասին: Երբ Հիսուսն եկավ, նա նրանց ասաց՝,, Ոչ, Աստված ձեր երկնային Հայրն է,,:

Ես գիտեմ, որ եթե ես դա ասում եմ, անմիջապես որոշակի հետադարձ կապ եմ տեսնում, ըստ որի՝ ,, Դա նշանակում է, որ Աստված տղամարդ է,,:

Ոչ, Աստված արական սեռի չէ, նա իգական սեռի էլ չէ: Նա հեռու է մարդկային բնությունից: Սաղմոսագիրն ասում է, որ նա հոգ է տանում իր յուրայինների համար՝ ինչպես որպես Հայր, այնպես էլ՝ որպես մայր:

Աստված Հայրն է բոլոր մարդկանց, քանի որ նա է բոլորին արարել և նա հեղինակություն ունի իր արարչագործության վրա: Սա առաջին միտքն է: Նա Հայր է, որովհետև նա է կյանքի սկզբնավորողը:

Հիսուսն էլ է Աստծուն բնութագրում որպես մեր Հայր, որովհետև բոլոր մարդիկ կարող են նրա հետ խոսել, ինչպես կխոսեին հոր հետ: Հիսուսը մարդկանց բացատրում է, որ Աստված գիտի նրանց կարիքները և հոգում է նրանց համար: Աստված հոգում է բոլոր մարդկանց համար: Յուրաքանչյուր մարդ կարող է նրան դիմել որպես Հոր: Հիսուսն ասում էր, որ Աստված թույլ է տալիս, որ անձրև տեղա արդարների և անարդարների համար, իսկ արևը փայլի բարիների և չարերի համար / հմտ. Մատթ. 5,45/: Նա բոլոր մարդկանց Հայրն է: Դա շատ կարևոր է, և Հիսուսն ավելի շատ դա է պարզաբանում:

Աստված բոլոր մարդկանց Հայրն է:

Նա Աստծուն նկարագրում է որպես սիրող Հայր, ով լիովին կարեկցում է մեղավոր մարդուն: Դուք գիտեք այդ պատմությունը՝ մարդն արարվեց, որպեսզի ապրի Աստծո հետ միասնության մեջ: Ադամն ու Եվան որոշեցին թողնել Աստծուն: Նրանք հեռացան նրանից: Աստված սիրող Հայր է՝ լի կարեկցանքով: Նա ցանկանում է, որ բոլոր մարդիկ դառնան դեպի իրեն: Պողոսն ասում է, որ նա սպասում է բոլորին- նրանց, ովքեր շատ հեռու են, և նրանց, ովքեր մոտիկ են, նա ցանկանում է փրկել նրանց: Դա է հենց Հայրը:

Աստված Հայրն է բոլոր մարդկանց: Սակայն, նրանք, ովքեր չեն հավատում, - ինչպես այստեղ է ասվում- նրան չեն ճանաչում, նրանք, ովքեր չեն ընդունում Հիսուսին , ովքեր սխալ են հասկանում Հիսուսի ավետիսը, այլ պատկերացում ունեն Աստծո և մարդու մասին: Նրանց համար Աստված դատավոր է, ով սպասում է Վերջին դատաստանին, որ պատժի այդ սարսափելի մեղավորներին: Սրան յուրովի են հավատում նաև շատ քրիստոնյաներ: Նրանք մոռանում են Հիսուս Քրիստոսի ավետիսը, ով Աստծուն բնութագրում է որպես սիրող Հոր: Շատ քրիստոնյաներ Աստուն վերաբերում են որպես կուռքի: Նրանք կարծում են, որ կարող են Աստծուն գնել: Նրանք կարծում են, որ եթե բավարար քանակությամբ զոհաբերություն կատարեն, եթե ճիշտ գործեր անեն, ապա կարող են գնել նրա ողորմածությունն ու օրհնանքը: ,, Եթե դու սիրալիր ես Աստծո հանդեպ, ապա նա սիրալիր կլինի քո հանդեպ, իսկ եթե դու սիրալիր չլինես Աստծո հանդեպ, նա էլ սիրալիր չի լինի քո հանդեպ,, :

Նրանք վերաբերում են նրան որպես կուռքի: Նրան մատուցում են զոհաբերություն և ասում ,, Ես հնազանդ եմ, բարի եղիր իմ՝ հանդեպ,,: Դա Աստծո՝ սիրող Հոր մասին ճիշտ պատկերացում չէ: Դա այլ բան է:

Շատերը- նաև քրիստոնյաների շրջանակում- Աստծուն դիտարկում են որպես թագավոր, ով ղեկավարում է աշխարհը և պետք է կարգի բերի այս աշխարհի ու հասարակության խնդիրները: Շատերն անգամ կարծում են, որ իրենք կոչված են Աստծուն այդ գործում օգնելու: Նրանք ուզում են աշխարհը ղեկավարել նրա անունով և նրա առաջադրանքով, ինչպես Իսրայելի թագավորը Հին կտակարանում:

Հիսուսն ասում էր՝,, Ոչ, իմ թագավորությունն այս աշխարհից չէ: Աստված ուզում է ձեզ փրկել, ձեզ ազատել այս աշխարհից: Բայց Աստծո առաջադրանքը աշխարհը ղեկավարելը չէ: Դրանով նա հետաքրքրված չէ:

Աստված մեր սիրող Հայրն է: Նա սիրում է բոլոր մարդկանց, իսկ նրա փրկությունը կայանում է հավիտենական կյանքին հասնելու մեջ:

Նրանք, ովքեր իսկապես չեն հավատում Հիսուս Քրիստոսին կամ սխալ են հասկանում նրա ավետիսը, կարծում են նաև, որ Աստված իր սիրո մեջ ընտրողական է և որոշ մարդկանց սիրում է ավելի շատ, քան մյուսներին՝ ելնելով նրանց ծագումից, պահվածքից, կրոնից, հավատից: Դա բոլորովին այդպես չէ: Բոլոր մարդիկ Աստծո զավակներ են, և նա բոլորին սիրում է նույն սիրով: Նա ցանկանում է , որ նրանք բոլորը հավիտենական միասնության մեջ լինեն իր հետ:

Սա չի նշանակում, որ բոլոր մարդիկ օգուտ ունեն նրա սիրուց: Դա բոլորովին այլ բան է, քանի որ նրանք ստիպված են ինչ որ բան անել, որպեսզի Աստծո սիրուց օգուտ քաղեն: Սակայն, Աստված տարբերություն չի դնում: Նա սիրում է նրանց՝ բոլորին՝ ինչպես արդարներին, այնպես էլ՝ մեղավորներին: Նա նրանց սիրում է նույն սիրով: Նա Հայրն է, իսկ մարդիկ՝նրա զավակները:

Մարդիկ երբեմն կարծում են, որ եթե բարեկեցիկ ես, դա նշանակում է, որ Աստված քեզ սիրում է և օրհնում, իսկ եթե դու հիվանդ ես կամ աղքատ, նշանակում է, որ դու ինչ-որ բան սխալ ես արել, և Աստված մերժում է քեզ: Դա ևս անմտություն է:

Աստված սիրում է իր բոլոր զավակներին նույն սիրով: Անգամ, եթե նրանք լավ չեն պահում իրենց, նա նրանց չի պատժում: Եթե դու աղքատ ես, դա չի նշանակում, որ Աստված մերժում է քեզ, իսկ եթե հարուստ ես, չի նշանակում, որ դու Աստծո կողմից օրհնված ես: Երբեմն ընդհակառակն է լինում: Բայց դա այլ պատմություն է:

Մենք պետք է հասկանանք, որ բոլոր մարդիկ Աստծո զավակներ են, և որ նրա կամքը նրանց պատժելը չէ կամ մեղավորին դատապարտելը: Քանի որ երբեմն մարդիկ իրենց իրավունք են վերագրում, որ իրենք Աստծուց առաջադրանք են ստացել պատժելու մեղավորներին և դատապարտելու նրանց, ովքեր այնպիսին չեն, ինչպիսին պետք է լինեին: Նրանք ուզում են Աստծո անունով գործել, որպեսզի պատժեն մեղավորներին և դատապարտվեն:

Աստված իր բոլոր զավակներին սիրում է նույն սիրով:

Դա բոլորովին չի համապատասխանում Աստծո կամքին: Նա Հայրն է բոլոր մարդկանց և նա սիրում է բոլորին: Նա ուզում է նրանց փրկել, ոչ թե՝ պատժել: Հոր և զավակների այս կերպարը մեծ նշանակություն ունի, բայց այն պետք է հասկանալ Հիսուս Քրիստոսի լույսի ներքո, միայն այդ դեպքում այն պարզ կլինի: Նրանք, ովքեր չեն հասկանում Հիսուս Քրիստոսի ավետիսը, դրա մասին բոլորովին սխալ ըմռնում ունեն:

,, Աստծո զավակ,, հասկացությունը նաև հոգևոր սահմանում ունի՝ Աստծո զավակները նրանք են, ովքեր վերստին ծնվել են ջրով և Սուրբ Հոգով: Նրանք Հիսուս Քրիստոսի ժառանգակիցներն են, հավիտենական կյանքի ժառանգորդները: Կա Աստծո զավակներ լինելու այլ սահմանում ևս՝ Աստոծ զավակները նրանք են, ովքեր ընդունում

են եկեղեցական բոլոր խորհուրդները, ովքեր հավատում են Ավետարանի ճիշտ տեղեկացմանը և իրենց կյանքը ձևավորում են Քրիստոսի գալստյանը սպասելով:

Եկեղեցական խորհուրդները ընդունելու մեջ չէ միայն կայանում Աստծո զավակ լինելը և հավիտենական կյանքը ժառանգելը: Ոչ, Աստծո զավակ լինել նշանակում է, որ պետք է ընդունեն եկեղեցական բոլոր խորհուրդները, հավատան Ավետարանի ճիշտ տեղեկացմանը և իրենց կյանքը ձևավորեն Քրիստոսի գալստյանը նախապատրաստվելով: Դա է Աստծո ճշմարիտ զավակը: Աստվածաշունչն ասում է, որ նրանք կրում են Հոր և Որդու անունը և իրենց պահվածքով պետք է նրա անունը սուրբ պահեն: Նրանք գործում են արդարությամբ և մերձավորի հանդեպ սիրով: Աստծո ճշմարիտ զավակը վստահում է իր Հորը, ինչ էլ որ պատահի: Պողոսն ասում է՝ ,, Աբբա, սիրելի Հայր,,: Դրանով նա ուզում էր արտահայտել հետևյալը՝ ,, Աստված, դու իմ Հայրն ես, ես վստահում եմ քեզ,,; Սա է Աստծո ճշմարիտ զավակ լինելը:

Աստծո նման զավակն ապրում է ազատության մեջ: Ի՞նչ է նշանակում սա: Աստվածաշունչն ասում է, որ նրանք, ովքեր թույլ են տալիս իրենց ղեկավարվել Սուրբ Հոգու կողմից, իսկապես Աստծո զավակներ են: Նրանք ազատ են: Աստծո զավակների այս ազատությունը—ես կանգ եմ առնում այս կետի վրա- նշանակում է, որ նրանք հեռանում են իրենց մարդկային բնությունից: Նրանց պահվածքը չի թելադրվում իրենց կարիքներից: Նրանց պահվածքը չի թելադրվում այն իրավիճակից, որում ապրում են, իրենց հարստությունից կամ աղքատությունից: Նրանց պահվածքը, նրանց կարծիքը չի թելադրվում սոցիալական հարթակներից կամ լրատվությունից: Աստծո զավակն ասում է՝ ,, Մարդիկ կարող են ասել, ինչ իրենք ուզում: Նրանք կարող են անել, ինչ ուզում են: Իրավիճակը կարող է լինել այնպիսին, ինչպիսի որ կա: Այս երևույթները չեն կարող որոշել, թե ես ինչպես պետք է ինձ պահեմ,,:

Աստծո զավակն առաջնորդվում է Սուրբ Հոգով, ինչ նա անում է, ինչ մտածում է և ինչ ասում է, պետք է բխի նրա հավատից, որը գործում է սիրո մեջ: Սա է Աստծո զավակների ազատությունը: Նրանց պահվածքը, զգացումները միայն մի բանից պետք է բխի՝ նրանց հավատից, որով նրանք գիտակցեն՝ ,, Ես Աստծո զավակ եմ: Աստված իմ Հայրն է: Նա սիրում է ինձ: Նա ուզում է ինձ հետ հավիտենական միասնության մեջ լինել իր արքայությունում: Այնտեղ եմ ես ցանկանում լինել,,: Սա է Աստծո զավակների ազատությունը:

Մեկ անգամ ևս՝ պետք է հասկանալ Հիսուս Քրիստոսի ավետիսը, որպեսզի հասկանան, թե ինչ է նշանակում Աստծո զավակ լինելը: Քանզի չարը գալիս է- միշտ նույն նպատակով- և ասում է՝,, Եթե դու Աստծո զավակ չես, ապա. . . ,, Ինչպես նա Հիսուս Քրիստոսին ասաց՝,, Եթե դու Աստծո սիրված Որդին ես, ապա դու չպետք է տառապես,,: Նա խայթում է մեզ, որպեսզի մենք կասկածի տակ դնենք մեր Աստծո զավակ լինելը, ասելով՝ ,, Ինչպե՞ս կարող ես դու այդպես գործել, կարծես լինես Աստծո զավակ: Նա պետք է քեզ սիրի, քո Հայրը լինի, իսկ դու ստիպված ես այսպիսի դժվար իրավիճակով

Առաքյալ Ջոնաթիան Կարլ Շթուրմ

Շրջանային առաքյալ Ռյուդիգեր Կրաուսե

անցնե՞լ: Նայիր մյուսներին: Նրանք ավելի շատ փող ունեն, առողջ են, իսկ դու հիվանդ ես: Նրանք երջանիկ են, իսկ դու մեծ քանակությամբ խնդիրներ ունես,, և այսպես շարունակ: Դուք գիտեք այս ոգուն: Բայց ով ճանաչում է Հիսուս Քրիստոսին, ով գիտի, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է և Աստված սիրում էր նրան, բայց այնուամենայնիվ նա պետք է տառապեր և հալածվեր: Աստծո սիրված զավակ լինել չի նշանակում, որ հեռու ենք լինելու բոլոր տառապանքներից: Մեկը մյուսի հետ կապ չունի: Աստծո զավակ լինել նշանակում է, որ Աստծո արքայություն գնալու և հավիտենական կյանքը ժառանգելու հնարավորություն ունեն: Սա է նշանակությունը: Դա չի նշանակում, որ ապահովագրված են բոլոր տառապանքներից և երկնային բոլոր գործերում օրհնված են: Ով ճանաչում է Հիսուս Քրիստոսին, նա գիտի, թե ինչ է նշանակում Աստծո զավակ լինելը: Նրանք հայացքն ուղղում են Հիսուսին և ասում են՝,, Լավ է, նորմալ է, որ նաև ինձ հետ է նման բաներ պատահում,,:

Աստծո ճշմարիտ զավակը գիտի նաև, որ իր կյանքում ավելի կարևոր բան չկա, քան Աստծո զավակ լինելը: Չարը՝ Հիսուս Քրիստոսի թշնամին, ցանկանում է դա խաթարել: Նա ուզում է, որ մենք մտածենք, որ մեր երկրային կյանքն ավելի կարևոր է, քան մեր Աստծո զավակ լինելը, նա ուզում է, որ մենք մեր կարծիքներն ու մտքերն ավելի կարևորենք, որպեսզի երկրային կյանքում որոշակի բաների հասնենք:

Բայց Աստծո զավակը գիտի՝,, Ոչ, Աստծո զավակ լինելս ավելի կարևոր է, քան իմ երկրային կյանքը: Խոսքը չի գնում իմ անձի, իմ գաղափարների, իմ կարծիքների, իմ իրավունքների մասին: Ես իրավունք ունեմ որպես առաջնեկ Աստծո արքայություն գնալու, ես ցանկանում եմ գործել Հիսուս Քրիստոսի օրինակով, իսկ դա ինձ համար ամենակարևորն է: Աստծո զավակ լինելը ինձ համար ավելի կարևոր է, քան ինքս ինձ իրացնելը,,: Հասկանու՞մ եք, ինչ նկատի ունեմ: Մեր Աստծո զավակ լինելն ավելի կարևոր է, քան մեր երկրային գոյությունը: Հիսուս Քրիստոսը մեզ օրինակ է ցույց տվել: Նրա համար Աստծո զավակ լինելը, Աստծո կողմից ուղարկված լինելը, որպես Հիսուս Նազարեթից լինելն ավելին է նշանակում: Նույնը կարևոր է նաև մեզ համար:

Աստված ուզում է իր զավակներին հավաքել, որպեսզի առաջնորդի դեպի իր արքայություն: Նա ցանկանում է, որ իր զավակները միավորված լինեն և իրենց տարբերությունները հաղթահարեն: Այն տեղը, որտեղ նրանք իրենց տարբերությունները կարող են հաղթահարել, դա եկեղեցին է: Դա Աստծո կամքն է, Հիսուս Քրիստոսի կամքն է,,՝ Այո, դուք բոլորդ լիովին տարբեր եք, բայց ես ցանկանում եմ, որ դուք միասնական լինեք, իսկ այն տեղը, որտեղ կարող եք հաղթահարել ձեր տարբերությունները, եկեղեցին է,,:

Այստեղ մենք խնդիր ունենք այսօրվա հասարակության մեջ, քանի որ այսօրվա հասարակությունում մարդիկ հակված են սևեռվելու իրենց տարբերությունների վրա: Յուրաքանչյուրը ցանկանում է շեշտել իր առանձնահատուկ լինելը՝,, Ես բոլորովին այլ եմ, պատկանում եմ այս կամ այն խմբին, ես այդպիսին եմ և դուք պետք է ընդունեք իմ առանձնահատուկ լինելը, իսկ քանի որ ես առանձնահատուկ եմ, ես ունեմ այս կամ այն իրավունքը,, և այսպես շարունակ: Ես հարց եմ տալիս՝ ինչպե՞ս եք ուզում նման բաժան –բաժան եղած հասարակության մեջ կայանալ: Չգիտե՞ք, որ այս ոգու միակ նպատակը կայանում է նրանում, որ

ավելի ու ավելի շատ մասնատի հասարակությունը: Զարմանալի չէ, որ անհնար է նման հասարակության մեջ միասնություն ստեղծելը: Զարմանալի չէ, որ նման հասարակությունը գնալով ավելի է պառակտվում և մարդիկ ավելի քիչ են դեպի իրար դառնում: Լավ չէ՞ր լինի մարդկանց համար, որ կենտրոնանան այն բանի վրա, ինչն իրենք ընդհանուր ունեն, քան այն բանի վրա, որը ցույց է տալիս նրանց տարբերությունը:

Որպես գլխավոր առաքյալ –փառք Աստծո- ես իրավասու չեմ այդ հասարակության համար: Բայց, եղբայրներ և քույրեր, եկեք այս մասին մտածենք: Ո՞րն է այն ոգին, որ կանգնած է բոլոր այս երևույթների հետևում: Դա պառակտման ոգին է: Ինչքան շատ խմբեր լինեն՝ համարելով, որ յուրաքանչյուրն այնքան կարևոր է և բոլորովին այլ է, ապա այնքան ավելի շատ կպառակտվի հասարակությունը, և այնքան ավելի շատ եսասիրություն կլինի աշխարհում:

Դառնանք դեպի եկեղեցին՝ մեզ համար կարևոր չեն մեր տարբերությունները, մեր կարծիքները: Աստված ուզում է, որ մենք միասնական լինենք: Պողոսն ասում է, որ Քրիստոսի համար ոչ մի հրեա կամ ոչ մի հույն չկա: Մենք տեղեկություն չունենք, թե դա ինչ նշանակություն ուներ այն ժամանակվա հասարակության համար: Մեզ համար կան միայն այդ երկու բառը՝ ,, հույներ,, և ,, հրեաներ,,: Այն ժամանակ մարդկանց համար դա մեծ նշանակություն ուներ: Եթե ավելի խորն ես գնում այս թեմայի մեջ, այնքան ճանաչում ես, որ իսկապես երկու աշխարհներ կային՝ բացարձակ տարբեր: Եվ Պողոսն ասում է՝ ,,Այստեղ ոչ հույն է, ոչ հրեա, ոչ ստրուկ, ոչ ազատված, ոչ տղամարդ, ոչ կին, քանի որ բոլորդ միասնական եք Հիսուս Քրիստոսով,,:

Այս հասարակության մեջ դա շատ բան է նշանակում: Դուք չեք կարող պատկերացնել, թե այն ժամանակ մարդկանց համար ինչ նշանակություն ունեին այս բառերը: Մեզ համար դրանք միայն արտահայտություններ են, բայց, խնդրեմ ավելի հստակ դիտարկեք պատմության և հասարակության համատեքստում, թե ինչ կնշանակեր այն ժամանակ հրեա կամ հույն լինելը, ստրուկ կամ ազատ մարդ լինելը:

Եվ Պողոսն ասում է, որ եկեղեցում, Քրիստոսով ոչ մի տարբերություն չկա: Ինչ մենք միասին ունենք, ավելի շատ է կարևոր, քան այն, ինչը մեզ բաժանում է: Մենք բոլորս ուզում ենք մեր կարծիքները կարևորել և Քրիստոսի կերպարը ձևափոխել: Մեր կոչումն ավելի կարևոր է, քան մեր իրավունքները: Մեր առաջադրանքն ավելի կարևոր է, քան այն բոլոր առավելությունները, որ մենք կարող ենք ունենալ, և այսպես շարունակ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք Աստծո զավակներ ենք: Աստված ցանկանում է, որ իր ընտանիքը, իր զավակները միասնական լինեն: Այն վայրը, որտեղ նրանք կարող են հաղթահարել իրենց տարբերությունները, եկեղեցին է, և Սուրբ Հոգու օգնությամբ մենք կարող ենք դա անել և իսկապես միասնական լինել Հիսուս Քրիստոսով- իսկ դա մեր նպատակն է:

Ավետիսը պարզ է: Աստված մեր սիրող Հայրն է, նա հոգ է տանում մեզ համար: Մի անհանգստացիր, նա գիտի քո կարիքները և հոգալու է քեզ համար: Ընդունիր, խնդրում եմ, որ նաև քո մերձավորն է Աստծո զավակ և Աստված նրան սիրում է հենց այնպես, ինչպես՝ քեզ, և ընդունիր, որ նա բացարձակ ոչ մի տարբերություն չի դնում: Ոչ ոք չի կարող աշխարհը ղեկավարել Աստծո անունով: Ոչ ոք չի կարող մեղավորներին պատժել և նրանց Աստծո անունով դատապարտել: Աստված բոլոր մարդկանց սիրող Հայրն է:

Մենք Աստծո զավակներ ենք, քանի որ մենք ընդունել ենք եկեղեցական բոլոր խորհուրդները: Մենք հավատում ենք Ավետարանի ճիշտ տեղեկացմանը: Մենք ուզում ենք մեր կյանքը Հիսուս Քրիստոսի գալստյանը նախապատրաստվելուն համահունչ ձևավորել: Այո, մենք կրում ենք Հոր և Որդու անունը և ամեն ինչ անում ենք, որպեսզի այն սուրբ պահենք նրանով, որ միշտ գործենք արդարությամբ և սիրով: Մենք Աստծո զավակներ ենք և ուզում ենք միասնական լինել Քրիստոսով: Նրա օգնությամբ մենք կարող ենք հաղթահարել մեր բոլոր տարբերությունները:.

Հիմնական մտքեր

Աստված բոլոր մարդկանց Հայրն է, նա սիրում է բոլորին նույն սիրով և ցանկանում է նրանց փրկել: Ջրով և Սուրբ Հոգով վերստին ծնված հավատացյալները, ովքեր իրենց կյանքը ձևավորում են Քրիստոսի գալստյանը սպասելով, ժառանգելու են հավիտենական կյանքը: Մենք առաջնայնություն ենք տալիս մեր Աստծո զավակ լինելուն և եկեղեցու միասնությանը:

ԵՂԻՍԵՆ ԲՈՒԺՈՒՄ Է ԲՈՐՈՏ ՆԵԵՄԱՆԻՆ

ԸՍՏ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Դ, 5-Ի

Նեեմանը ասորիների զորքի հրամանատարն էր: Նրա թագավորը բարձր էր գնահատում նրան, քանի որ նրա շնորհիվ ասորիները հաղթեցին Իսրայելին: Նա զորեղ տղամարդ էր, բայց ուներ բորոտություն:

Նեեմանի կինն ուներ մի սպասավորուհի: Այդ փոքրիկ աղջկան ասորի զինվորականները բերել էին Իսրայելից: Նա ասում է իր տիրուհուն՝,, Երանի թե իմ տերը գնար Աստծու մարգարեի մոտ, որը Սամարիայում է, նա նրան կբուժեր բորոտությունից,,:
Նեեմանը թագավորին հաղորդում է այն, ինչ ասել էր աղջիկը: Թագավորը նամակ է գրում Իսրայելի արքային, որպեսզի նա օգնի Նեեմանին:
Նեեմանը վերցնում է տասը տաղանդ արծաթ, վեց հազար դահեկան, տասը ձեռք պատմուճան և նամակը տանում է հանձնելու Իսրայելի արքային: Այնտեղ գրված էր՝,, Երբ որ քեզ հասնի այս նամակը, գիտցիր, որ քեզ մոտ եմ ուղարկում իմ ծառա Նեեմանին, որպեսզի բուժես նրան իր բորոտությունից,,: Երբ Իսրայելի արքան կարդում է նամակը, պատառոտում է իր հագուստը և ասում՝,, Մի՞թե ես Աստված եմ, որ սպանեմ կամ կենդանացնեմ: Ինչպե՞ս կարող եմ ես տղամարդուն բուժել իր բորոտությունից: Տեսնում եք, թե ինչպես է ասորիների թագավորը ինձ հետ վիճելու պատրվակ փնտրում,,:
Դա լսում է Եղիսե մարգարեն: Նա մի սուրհանդակ է ուղարկում Իսրայելի արքայի մոտ և ասել տալիս՝,, Թող Նեեմանը ինձ մոտ գա և իմանա, որ Իսրայելում մարգարե կա,,;
Նեեմանը երկու երիվարներով ու մարտակառքով կանգնում է Եղիսեի դռան առաջ:
Եղիսեն սուրհանդակ է ուղարկում նրա մոտ և ասել տալիս՝,, Գնա յոթն անգամ լվացվիր Հորդանան գետում, քո մարմինը կբուժվի և դու կմաքրվես,,:
Նեեմանը բարկանում է և ասում՝,, Ես էլ կարծում եմ, թե գուցե կգա, կկանգնի ինձ մոտ, իր Տեր Աստծու անունը կտա, իր ձեռքը կդնի հիվանդ տեղի վրա և կբուժի իմ բորոտությունը: Մի՞թե Դամասկոսի Նաբանա Փարփարա գետերը Իսրայելի բոլոր ջրերից ավելի լավ չեն: Ինչու՞ չերթամ, լվացվեմ դրանց



մեջ և մաքրվեմ,,: Նա շրջվում է և զայրացած ետ վերադառնում:Նրա ծառաները նրան են մոտենում և ասում՝ ,,Սիրելի հայր, եթե մարգարեն քեզ ավելի դժվար բան կարգադրեր, դու այն կարող էիր չանել: Նա միայն ասում է՝,, Լվացվիր ու կմաքրվես,,:
Նեեմանը լսում է իր ծառաներին:
Naaman hört auf seine Diener.
Նա իջնում է կառքից և յոթն անգամ թաթախվում Հորդանան գետի մեջ, ինչպես առաջարկել էր մարգարեն, և նրա մարմինը դառնում է մատղաշ երեխայի մարմնի նման, նա մաքրվում է:
Իր բոլոր մարդկանց հետ նա վերադառնում է Եղիսեի մոտ:
Նեեմանը մոտենում է նրան և ասում՝,, Հիմա համոզվեցի, որ չկա աստված ամբողջ աշխարհում, բացի Իսրայելի Աստծուց: Արդ, ընծա ընդունիր քո ծառայից և թույլ տուր քեզ օրհնեմ,,:
Եղիսեն նրանից ոչինչ չի վերցնում, ասում է նրան՝,, Գնա խաղաղությամբ,,:
Երբ Նեեմանը մի քիչ առաջ է գնում, սպասավոր Գեեզին ասում է՝,, Ես կվազեմ նրա հետևից և ինձ համար նրանից մի բան կվերցնեմ,,: Գեեզին վազում է Նեեմանի ետևից, և երբ Նեեմանը տեսնում է նրան, իջնում է իր կառքից, նրան ընդառաջ է գնում և ասում՝,, Բարի գործո՞վ է,,:
Սպասավորն ասում է՝,,Այո, բայց իմ տերն ինձ քեզ մոտ ուղարկեց՝ ասելով՝,, Ահա Եփրեմի լեռներից ինձ մոտ եկան երկու երիտասարդ մարգարեներ: Նրանց համար տուր մի տաղանդ արծաթ և երկու ձեռք պատմուճան,,:
Նեեմանը Գեեզիին է տալիս անգամ երեք տաղանդ արծաթ և երկու պատմուճան, Նեեմանի ծառաները այդ ընծաները Գեեզիի համար տանում են տուն: Գեեզին կանգնում է Եղիսեի առաջ, Եղիսեն հարցնում է նրան՝,, Որտեղից՞ ես գալիս, Գեեզի,,: Գեեզին խուսափում է ճիշտն ասելուց: Սակայն, Եղիսեն գիտեր, թե ինչ է տեղի ունեցել՝,, Արծաթ ու հագուստներ վերցրեցիր՝ ձիթենիներ ու այգիներ, արջառ ու ոչխար գնելու և ծառաներ ու աղախիններ ունենալու համար, թողՆեեմանի բորոտությունը քեզ ու քո սերնդին կպչի հավիտյան,,:
Գեեզին դուրս եկավ նրա մոտից ձյան նման սպիտակած բորոտ մարմնով:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 03 2023, ձևավորումը՝ Միրելա Ֆորսունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԻՄԲԵՐԼԵԻՆ ՊԱՐԱՄԱՐԻԲՈՅՈՒՄ / ՍՈՒՐԻՆԱՄ/

Դուք արդեն լսե՞լ եք Սուրինամի մասին: Իմ հայրենիքը փոքր երկիր է Հարավային Ամերիկայում: Արևմուքում այն սահմանակցում է Գվինեային, Արևելքում՝ Ֆրանսիական Գվինեային, որը պատկանում է Ֆրանսիային և Եվրոպական Միության մաս է կազմում: Սուրինամում ապրում է մոտավորապես 590 000 մարդ, որոնց մեծ մասն ապրում է մայրաքաղաք Պարամարիբոյում, ինչպես՝ իմ ընտանիքն ու ես: Ի դեպ, իմ անունը Քիմբերլեյ է, և ես տասը տարեկան եմ:

Առաջ Սուրիմանը եղել է Նիդերլանդների գաղութը, բայց 1975 թվականի նոյեմբերի 25-ին դառնում է անկախ հանրապետություն: Դրա համար էլ մենք մեր մայրենի լեզվին՝ սրանան տոնգոյին զուգահեռ խոսում ենք նաև նիդերլանդերեն, այն դպրոցում դասավանդման լեզուն է:

Իմ ընկերուհիների անուններն են՝ Չերենիկա և Նորանյա: Մենք սովորում ենք նույն դասարանում:

Ինձ դուր է գալիս լեզուներ սովորելը: Ես խոսում եմ նիդերլանդերեն, սարանան տոնգո, իսպաներեն և մի քիչ էլ անգլերեն լեզուներով: Իմ դասարանական նկարում առաջին շարքի ձախից երկրորդը ես եմ:

Այստեղ դուք տեսնում եք ինձ՝ ծնողներիս հետ: Հայրս՝ Հարվեյը, Սուրինամի շրջանային առաջնորդն է և շինարարական ձեռնարկություններից մեկի տնօրենը: Նա հոգում է մեր եկեղեցու վերանորոգումը և երբեմն կառուցում է նաև նոր եկեղեցիներ: Այժմ նա Դանկբաարկոնդրեում մեր եկեղեցու կողքին կառուցում է բժշկական կայան:

Մարս՝ Էվելիզան, ծնվել է Դոմինիկյան Հանրապետությունում: Այնտեղ խոսում են իսպաներեն, նա ինձ սովորեցնում է այդ լեզուն: Նա Վելթբեդախթում գտնվող Կորանթիջին եկեղեցական հիմնադրամին պատկանող խանութի տնօրենն է: Այն կոչվում է Մականդրա, որը գերմաներեն նշանակում է՝ միասին: Հենց նրա կողքինը մեր եկեղեցին է, որտեղ ես ժամերգությունների եմ հաճախում իմ եղբայրներ Անջելի, Ռաուլի ու մայրիկիս հետ:

Սուրինամի մարզն ունի տասը համայնք՝ շուրջ 700 քույր-եղբայրներով: Այստեղ դուք տեսնում եք մեր եկեղեցին:

Իմ սիրելի ուտեստը դոմինիկյան նազին է՝ բրձնից պատրաստված ուտեստ, ժամանակ առ ժամանակ նաև՝ բուրգերը:

Իմ սիրելի զբաղմունքներն են՝ հեծանիվ վարելը և խաղեր խաղալը, ես սիրում եմ նաև երաժշտություն: Հաճույքով խաղում եմ նաև մեր կատվի հետ:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 03, 2023; լուսանկարները՝ մասնավոր՝ laurent33 ; Herjal; balabolka - stock.adobe.com

Լուսանկարները՝ ՆԱԵ Կանադա

Պաշտոնի համար ընտրություն և կանչ

Պաշտոն հասկացողության վերաբերյալ ,, ինչը,, և ,,ովը,, պարզաբանված է: Բայց էլի հարց է առաջանում՝ Ինչու՞ է հոգևոր պաշտոն տրվում հավատացյալին: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը դա պարզաբանում է այս շրջաբերականում:

Նորառաքելական հավատամքի հինգերորդ դրույթում այսպես է գրված՝ ,, Ես հավատում եմ, որ պաշտոնի համար Աստծո կողմից ընտրվածը ձեռնադրվում է միայն առաքյալների կողմից,,: Սրա վերաբերյալ դավանաբանությունը պարզաբանում է՝

- Պաշտոնը ոչ մարդու գործն է, ոչ էլ՝ համայնքի-այն շնորհ է, որ Աստված տվել է իր եկեղեցուն:
- Աստված ինքն է ընտրում այն անձին, ում վստահելու է պաշտոնը:
- Այս ընտրությունն Աստծո կողմից իրականացվում է ձեռնադրության միջոցով, որի լիազորությունը տրված է առաքյալների ծառայությանը: / ՆԱԵԴ 2,4,5/:

Հավատը պահել և ամրապնդել

Պաշտոնների համար աստվածային կանչին հավատալը մեր եկեղեցու հարստության մի մասն է: Այն սպասավոր եղբայրների համար ուժի և մոտիվացիայի աղբյուր է, միաժամանակ նպաստում է համայնքի կողմից հոգևոր պաշտոնի ըմբռնմանը:

Մենք ասում ենք, որ Աստվածն է, որ ձեռնադրությունից առաջ ընտրում է մարդուն, և այդ ընտրությունն իր արտահայտումն է գտնում նրան ձեռնադրող առաքյալի որոշման մեջ: Սակայն, պետք է խոստովանել, որ այս բացատրությունը բավականին հակիրճ է՝ հաշվի առնելով թեմայի նշանակությունը:

Որոշ հանգամանքներ կարող են դրդել մարդուն կասկածի տակ դնելու սպասավորի աստվածային ընտրությունը: Սա լինում է այն դեպքում է, երբ պարզվում է, որ սպասավորը չի համապատասխանում տվյալ հոգևոր պաշտոնին կամ թերանում է պատրականությունները կատարելու մեջ:

Շատ դեպքերում ձեռնադրվող սպասավորի ընտրությունը կատարվում է հետևյալ ձևով՝

- Տվյալ վայրի պատասխանատուները առաքյալին են ներկայացնում ձեռնադրության համար առաջարկվող անձնաց անվանացանկը: Այդ առաջարկների հիման վրա առաքյալը / կամ շրջանային առաքյալը/ ընտրում է ձեռնադրվող անձանց:
- Տեղական պատասխանատուն շփումներ է ունենում ընտրված անձանց հետ, նրանց բացատրում է, թե ինչ սպասելիքներ ունեն նրանցից:
- Եթե այդ անձինք տալիս են իրենց համաձայնությունը, առաքյալը նրանց պաշտոնի է ձեռնադրում:

Պարտադիր չէ այս,, վարչական,, մոտեցումը Աստծո կողմից ընտրված լինելու հանգամանքին համահունչ դարձնելը: Դրա համար էլ օգտակար եմ համարում պաշտոնի համար աստվածային ընտրություն և կանչ հասկացությունների փոքր ինչ պարզաբանումը:

Աստվածային ընտրություն

Ինչպես բոլոր այն որոշումները, որոնք վերագրվում են Աստծուն, պաշտոնի համար ընտրությունը ևս միստիկա է, որը կարող ենք ըմբռնել միայն հավատի միջոցով: Ոչ մի առաքյալ չի կարող ամողջությամբ հասկանալ, թե ինչու է Աստված հենց տվյալ հավատացյալին ընտրում, որպեսզի նրան առանձնահատուկ առաջադրանք վստահի: Առաքյալների առաջադրանքն ընդհանուր առմամբ կայանում է նրանում, որ ճանաչեն Աստծո կամքն ու գործեն դրան համապատասխան / ՆԱՌԴ 7,7/:

Որոշելու համար, թե որ հավատացյալներն են Աստծո կողմից պաշտոնի համար ընտրվում, պետք է հաշվի առնվեն՝

եկեղեցու կարիքները՝ պաշտոնը ինքնանպատակ չէ, այն տրվում է Աստծո կողմից իր եկեղեցու կարիքները բավարարելու համար: Առաքյալն ու նրա հետ համագործակցողները պետք է ղեկավարվեն Սուրբ Հոգու կողմից, որպեսզի հասկանան համայնքների կարիքներն ու ակնկալիքները:

Հոգևոր շնորհները՝ Նրան, ում Աստված ընտրել է հոգևոր պաշտոնի համար, տալիս է աստվածային շնորհներ, որոնք անհրաժեշտ են այդ առաջադրանքը կատարելու համար: Հավատացյալին, ով կանչվել է պաշտոն ստանձնելու համար, ճանաչում են՝

- Հիսուս Քրիստոսի, նրա մահվան, հարության և գալստյան հանդեպ նրա հավատով,
- Ավետարանին նրա հավատարիմ լինելով,
- Եկեղեցու հանդեպ՝ որպես փրկության միջնորդի, առաքյալների, եկեղեցական խորհուրդների ու պաշտոնի հանդեպ նրա հավատով,
- Աստծո և հավատացյալների հանդեպ նրա սիրով,
- ծառայելու նրա պատրաստակամությամբ:

Մարդկային ունակությունները՝ Աստծո կողմից ընտրությունը երևում է նաև նրա ունակությունների մեջ, որոնք Աստված տալիս է հավատացյալին: Նշվում է, օրինակ, լսելու կարողությունը, երկխոսության մեջ մտնելու ունակությունը, հասկանալի արտահայտվելը, բաց լինելը, մարդկային առողջ հասկացողություն, գիտելիքներ կամ սովորելու կարողություն ու պատրաստակամություն ունենալը:

Առաքյալն ու նրա աշխատակիցները պետք է գիտակցեն, որ սպասավորի նաև մարդկային- այսինքն բնավորության, զգացմունքայնության կամ ինտելեկտի- ունակությունները պետք է համապատասխանեն այն համայնքի կարիքներին, որտեղ նա կանչվել է ծառայության:

Համայնքի կողմից ըմբռնելը՝ Պաշտոնը նվեր է, որ Աստված տալիս է համայնքին: Նա ընտրում է սպասավորին այն հավատացյալներին համահունչ, որոնց նա պետք է ծառայի: Առաքյալը, պետք է իմանա, որ այն հավատացյալը, որին նա ուզում է ձեռնադրել, պետք է ընդունվի համայնքի կողմից: Եկեղեցու վաղ շրջանում առաքյալներն համայնքին առաջարկում էին անվանել յոթ տղամարդու, ովքեր պետք է ձեռնադրվեին սարկավագներ / Գործք 6, 1-6/: Մեր օրերում այդ որոշումը դրվում է համայնքի տեղական պատասխանատուի կամ շրջանային առաջնորդի վրա, ով գործում է համայնքի անունով և առաջադրանքով: Առաքյալին իրենց առաջարկը հիմնավորելու համար ղեկավար սպասավորները հաստատում են, որ համայնքը ճանաչում է այն հավատացյալին, ում ձեռնադրությունը նրանք ցանկանում են, գիտի / կամ կարող է իմանալ/ նրա հոգևոր շնորհները և ունակությունները:

Հավատացյալների կողմից նրան պաշտոնի կանչելու ըմռնումը՝ Աստվածային ընտրությունը կապված է պաշտոնի համար կանչելու հետ: Աստված կանչում է այն մարդուն, որին նա ընտրել է և նրա տալիս

է որոշման հնարավորություն՝ ընդունելու կամ մերժելու իր ընտրությունը: Մենք համոզված ենք, որ այդ կանչը հավատացյալին հայտնվում է առաքյալի կամ նրա ներկայացուցչի կողմից : Սակայն, սա միակ հնարավորությունը չէ, որով կարող է Աստված հավատացյալին համապատասխան ծառայության կանչել:

Աստվածային կանչն արտահայտվում է նաև կանչվածի անձնական զարգացմամբ: Կյանքի պայմաններով և անձնական փորձով Աստված նրա սրտում արթնացնում է՝

- շնորհակալություն ընդունած շնորհների ու բարեգործությունների համար,
- սեր Աստծո և եկեղեցու հանդեպ,
- Աստծուն և եկեղեցուն ծառայելու ցանկություն՝ ծնված շնորհակալությունից և սիրուց :

Ընտրությունը և կանչը հաստատելը

Ներքին կանչի զգացման կապը առաքելոց ծառայության կողմից արված կանչի հետ հավատացյալի համար հնարավոր է դարձնում այն գիտակցության հասնելը, որ նա Աստծո կողմից է կանչվել այդ պաշտոնի համար: Կանչվածը պետք է իր ընտրությունն ու կանչված լինելը հաստատի նրանով, որ կամավոր հայտնի՝

- նորառաքելական հավատամքին իր համաձայնության մասին,
- իր պաշտոնի կատարման մասին այն առաջադրանքի շրջանակում, որը տրվել է նրան,
- առաքյալների ծառայության և այլ սպասավորների հետ միասին աշխատելու մասին
- նորառաքելական եկեղեցու կարգ ու կանոնները պահպանելու մասին:

Կարևոր է, որ կանչվածը ազատ և գիտակցորեն կարողանա որոշել գործի էությունը: Նա պետք է իմանա, թե ինչ պարտավորություններ ունի և ինչ հետևություններ են բխում այդ պարտականություններից: Այս պատճառով էլ կարևոր է, որ ամուսնական զույգերն ընդգրկված լինեն որոշման պրոցեսում:

Իր ձեռնադրությունից հետո սպասավորն իր ընտրությունը հաստատում է նրանով, որ

- նա սրբանում է,
- ձգտում է ճանաչել աստվածային կամքը և գործում է համապատասխանաբար,
- խորացնում է միասնությունը առաքյալների ծառայության և այլ սպասավորների հետ,
- զարգացնում է իր շնորհներն ու ունակությունները,
- պարտավորվում է շարունակաբար կրթվել գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու նպատակով, որոնք անհրաժեշտ են իր պաշտոնը կատարելու համար:

Եկեղեցու ղեկավարությունը պետք է հոգա այն բանի համար, որ սպասավորն իր պաշտոնից բխող աշխատանքում աջակցություն ստանա: Համայնքը պետք է իր աղոթքով աջակցի սպասավորին, ցույց տա արժեքների իր գնահատանքը և նվիրվածությունը:

Ոչ մի երաշխիք հաջողության համար

Աստծո կողմից ընտրությունը, որն իրականանում է ձեռնադրության միջոցով, չի բացառում, որ սպասավորը թերանա իր պաշտոնը կատարելու ընթացքում:, Չնայած դրան՝ Աստծո կողմից սկզբնական կանչը դրանով հարցականի տակ չի դրվում,, / ՆԱԵԴ 2,4,5/:

Դավանաբանությունը տարբերություն է դնում Աստծո, ով կատարյալ և անսխալական է և մարդու միջև, ով թեև ընտրված է, բայց ոչ կատարյալ և սխալական է մնում:

Հնարավոր թյուրիմացությունը վանելու համար, մենք հենց սկզբից պարզաբանում ենք, թե ինչ ենք հասկանում պաշտոնի կատարման ժամանակ թերանալ ասելիս: Թերացումը, որի մասին այստեղ խոսում ենք, չի վերաբերում ձեռք բերած արդյունքներին, այլ՝ այն ձևին, թե ինչպես է սպասավորն իրականացնում աստվածային կամքը:

Պատճառները, որոնք կարող են սպասավորին խանգարել իր պաշտոնի առաջադրանքը կատարելիս, տարբեր բնույթի կարող են լինել՝

սպասավորի թերացումը՝ սպասավորը կարող է իր պաշտոնի կատարման ժամանակ հաջողության չհասնել, եթե նա

- գործի այն ձևով, որն անհամատեղելի լինի իր պաշտոնին,
- միասնության մեջ չլինի առաքյալների ծառայության հետ,
- իր պահվածքով կորցնի հավատացյալ քույր-եղբայրների վստահությունը,
- հրաժարվի իր շնորհներն ու ուժը եկեղեցու ծառայությանը ներդնելուց :

Բոլոր նման դեպքերում սպասավորը զրկվում է աստվածային օրհնությունից և նրա գործունեությունը դատապարտվում է թերացման: Այնուամենայնիվ, այն գործողությունները, որ նա անում է պաշտոնից բխող իր լիազորությամբ, իր պահվածքի պատճառով հարցականի տակ չի դրվում / խորհուրդների նվիրաբերում, մեղքերի քավության տեղեկացում, օրհնանքի նվիրաբերում, խոսքի ճիշտ տեղեկացում/: Դրանք մնում են վավերական և կարող են իրենց բոլոր ազդեցությունները ծավալել:

Երբ համայնքն է թերանում՝ մարդկային թուլությունը կարող է այն բանին հանգեցնել, որ համայնքի անդամները անհանդուրժող կամ թշմանաբար լինեն սպասավորի հանդեպ: Այդ ժամանակից սկսած նա կարող է իր առաջադրանքը այդ համայնքում այլևս չկատարել: Նման թերությունը վերագրվում է համայնքին, ոչ թե՝ սպասավորին:

Երբ թերանում է եկեղեցու վարչությունը՝ առաքյալներն էլ են ոչ կատարյալ մարդիկ, որոնք կարող են սխալվել: Եթե պարզվում է, որ սպասավորը՝ չնայած իր ջանքերին, չի կարողանում իր պաշտոնը կատարել, առաքյալը պետք է ազնվություն ունենա հարցաքննելու գործը: Գուցե լինեն սխալներ համայնքի կարիքների կամ սպասավորի ունակությունների դիտարկման գործում: Սակայն, առաքյալը պարտավոր է աջակցելու այդ սպասավորին համապատասխանեցնելու առաջադրանքը նրա ունակություններին և հոգալու, որ նա և նրա ընտանիքը հոգու համապատասխան խնամք ստանան:

Թերացում արտաքին պայմանների պատճառով՝ որոշ դեպքերում ձեռնադրությունից հետո տեղի են ունենում դեպքեր, որոնք դժվարացնում կամ անհնար դարձնում են պաշտոնի կատարումը: Դա այն դեպքում է լինում, երբ

- սպասավորն ունենում է առողջական խնդիրներ կամ նշանակալից փոփոխություններ իր ընտանիքում կամ մասնագիտական կյանքում;
- երբ համայնքի միասնականությունը նկատելի կերպով փոփոխվում է այնպես, որ այն նոր պահանջներ են առաջացնում,
- եկեղեցու դեմոգրաֆիական զարգացումը ստիպում է փոխելու իր կազմակերպությունը :

Նման փոփոխությունները Աստծո կանչը հարցականի տակ չեն դնում, այլ մտածել են տալիս՝

- թե հիմա ինչ է սպասում Աստված,
- թե ինչ պետք է արվի, որ սպասավորն իր պաշտոնի լիազորությունները Աստծո կամքի համաձայն կատարել կարողանա,
- թե արդյոք պաշտոնի առաջադրանքը համապատասխանում է սպասավորին,
- թե արդյոք ժամանակն է եկել ազատելու սպասավորին պաշտոնի իր առաջադրանքից :

Պաշտոնի կատարումը երաշխիք չէ փրկության համար, իսկ պաշտոնի կատարման թերացումը անհնար չի դարձնում սպասավորի փրկությունը: Մեր առաջադրանքը նրա հանդեպ մնում է անփոփոխ, այն է՝ նրան դրա համար օգնել, փրկությանը մասնակից դարձնել: Առաքյալի առաջադրանքը չէ պատժել նրան, ով մերժում է պաշտոնը: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ այն սպասավորները, ովքեր դժվարություններ են ունենում իրենց պաշտոնն իրականացնելիս, առանձնահատուկ կարիք ունեն մխիթարության և աջակցության:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Ոչ մի ճանապարհ շատ հեռու չէ

Հեռավորությունը, բանտի պարիսպները, սոցիալական պայմանագրերը չեն կարող նորառաքելական քրիստոնյաներին ետ պահել իրենց հավատքի քույր-եղբայրների մասին հոգալուց և նրանց հետ միասնություն կազմելուց - հայացք համայնքային կյանքին ամբողջ աշխարհում:

Լուսանկարները՝ ՆԱԵ Հարավ- Արևելյան Ասիա

Լայն ծով է ընկած ֆիլիպինյան կղզիների միջև, ուր շրջանային առաքյալ Էդի Իսնոիգրոհոն հունիսի վերջին այցելել էր առաքյալ Սամուել Թանսահտիկնոյի ուղեկցությամբ: Հինգ ժամերգություն և երկու հանդիպում տեղի ունեցավ հոգևորականների հետ Լեյթեում, Բոհոլում և Սեբուում- տարածված երեք տարբեր կղզիների վրա: Գագաթնակետը հունիսի 2-ին Սեբուի կենտրոնական եկեղեցում ննջեցյալների համար տեղի ունեցած ժամերգությունն էր:

Լուսանկարը՝ Վերներ Ֆելդի, Բիանկա Լեյնենքեքերի

Հոգու խնամք ճաղերի ետևում

Ես եղել եմ բանտում և դուք եկել եք ինձ մոտ՝ Մատթեոսի 25,36-ի աստվածաշնչյան այս խոսքը ոգեշնչեց Նոբուիլո մարզից քարոզիչներ Միայբոնգա Նդոնգենին, Քսաբիսո Ստվային և Խայալեթհու Վաալթայնին՝ / Հարավային Աֆրիկա/ այցելելու իրենց համայնքերի անդամներին և հոգու խնամք իրականացնելու նրանց համար, ովքեր սոցիալական հաստատություններում են: Հունիսի 3-ին հոգևորականները այցելեցին սբ. Ալբանսի ուղղիչ ծառայության հավատացյալ քույր-եղբայրներին:

Երաժշտությունը ոչ մի հաշմանդամություն չի ճանաչում

,, Արի, հիմա ժամանակն է, մենք երկրպագում ենք, տուր նրան քո սիրտը, արի, ինչպիսին էլ լինես, և երկրպագիր,, - բարի գալստյան այս երգով Ֆակտոր Գ երգչախումբը հունիսի սկզբին Տրիրում / Գերմանիա/ ողջունեց իր հանդիսատեսին: Իսկ դա բառացիորեն նշանակում է, որ Ֆակտոր Գ-ն ներառական նախագիծ է, որտեղ միասին երաժշտությամբ են զբաղվում հաշմանդամություն ունեցող և ոչ հաշմանդամ երիտասարդները: Երգչախումբը Յուտյուբյան ուղիղ եթերով լավագույնս գովաբանական

Լուսանկարը՝ ՆԱԵ Տոնգո

Լուսանկարը՝ ՆԱԵ Նիգերիա

երգեր ներկայացրեց հանդիսատեսին ու բազմաթիվ ունկնդիրներին, ովքեր ներկա էին՝ չնայած ամառային տապին: Իսկ երգիչներին զովացնելու և միաժամանակ մոտիվացնելու համար խմբավարը բաժանել էր Ֆակտոր Գ-ի դրոշներ, որոնք համերգի ընթացքում ունկնդիրները ռիթմով թափահարում էին:

Կանանց օրեր Աֆրիկայում

Տոնգոյի և Նիգերիայի մարզերից կանայք երեք օր տրամադրել էին իրենց: Մայիսի 26-ից մինչև 28-ը հարյուրավոր կանայք Տոնգոյի մարզի հինգ համայնքներից հանդիպեցին Դափափոնգում: Նրանք այդ երեք օրն օգտագործեցին ելույթների, քննարկումների, աղոթքների և միասին երգելու համար: Հավատացյալ քույրերի հետ առաքյալ Կոսսիվի Էդոհ Կլոութսեն տոնեց վերջին ժամերգությունը:

Արևմտյան Նիգերիայի 16 մարզերի հավատացյալ քույրերը հունիսի 7-ից 9-ը մասնակցեցին ,, Քույրերի ընկերություն,, հավաքին: Հիմնականում անցկացվեցին սեմինարներ, գործնական պարապմունքներ և առողջության ստուգում: Դրանից բացի, կանայք հավաքվեցին Իկեայի եկեղեցում աղոթքի և ժամերգության համար, որն անցկացրեց առաքյալ Օսկար Նվանզան:

,, Հիմա ժամանակն է,,

Ամբողջ Գերմանիայից Նորառաքելական երիտասարդները հաղթահարեցին դավանաբանական սահմանները Ավետարանական եկեղեցու օրվա առիթով: Քրիստոսի մարմնի և արյան տոնի շաբաթվա վերջին Նյուրնբերգում 100 000 հավատացյալների համար սկսվեց Ավետարանական եկեղեցու 38-րդ օրը: Սբ. Լորենցի լեփ-լեցուն եկեղեցում ժամը 11-ին մեկնարկեց ժամերգությունը: Ժամերգությանը երաժշտական ձևավորում տվեց ամբողջ Գերմանիայից 85 երիտասարդներ ընդգրկող երգչախումբը՝ Գերրիթ Յունգեի ղեկավարությամբ, նվագակցում էին երգեհոնն ու դաշնամուրը՝ Սիգի Հենգերի կատարմամբ: Եկեղեցու օրվա նշանաբանն էր՝ ,, Հիմա ժամանակն է,, ; իսկ երիտասարդները կատարում էին եկեղեցական ,, Հիմա մեծագույն ժամանակն է,, երգը: Այս նշանաբանի ներքո տեղի ունեցան նաև այլ միջոցառումներ, որոնցում մասամբ ներգրավված էր նաև նորառաքելական եկեղեցին: Օրինակ, էկումենիկ ներկայացուցիչ, առաքյալ Մաթթիաս Պֆյունցերը ապոկալիպսիսի մասին պանելային քննարկման ժամանակ ներկայացրեց Քրիստոսի մոտալուտ գալստյան վերաբերյալ նորառաքելական մոտեցումը: Նյուրնբերգում գործող առաքյալ Արնե Հերմանը նախագծի երգչախմբի երիտասարդների և հյուրերի հետ տոնեց ժամերգությունն այն հորդորով, որ տրամադրության տակ եղած ժամանակն օգտագործեն Քրիստոսով և բարին անեն:

Լուսանկարը՝ Փեթեր Յոհաննինգի, Ֆրանկ Շուլցթի

Տեղեկատու

07.01.2024	Բազել (Շվեյցարիա)
14.01.2024	Հորն (Նիդերլանդներ)
19.01.2024	Գիսենյի (Ռուանդա)
21.01.2024	Կիգալի (Ռուանդա)
04.02.2024	Լիմա (Պերու)
11.02.2024	Մուլհաուս (Ֆրանսիա)
25.02.2024	Հիլդեսհայմ (Գերմանիա)
03.03.2024	Պալմա դե Մալլորկա (Իսպանիա)
10.03.2024	Մինդեն (Գերմանիա)
14.03.2024	Քանան (Մյանմար)
17.03.2024	Չիանգ Մայ (Թաիլանդ)
29.03.2024	Վիլ (Շվեյցարիա)
31.03.2024	Նագոլդ (Գերմանիա)

New Apostolic Church
International